

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐ ԳՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻՆ ՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ԹՈՂ ՈՐ ԴԱՌՆԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԿՅԱՆՔԻ ՄԼԱՅՈՒՆ ՈՒՂԵԿԻՉԸ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔ»-Ի ՔԱՐՈՉԱՐՇԱԿԸ

ՓՈՐՁԱՌՈՒ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐ, ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ՝ ԸՆՏՐԱՑՈՒՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՔՍԱՆՅԱԿՈՒՄ



Սեպտեմբերի 10-ին Թբիլիսիում, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կենտրոնական գրասենյակում, անցկացվեց առաջիկա խորհրդարանական ընտրությունների ընտրացուցակի առաջին քսանյակի շնորհանդեսը:

Յուլի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին «Վրացական երազանք» կուսակցության ընտրական շտաբի պետ, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, ներկայացնելով ընտրացուցակի առաջին քսանյակը, նշեց, որ ցուցակում ընդգրկվել են ինչպես փորձառու քաղաքագետներ, այնպես էլ լայն ճանաչման արժանացած նարդիկներ, գործարարներ:

Սեր ընտրացուցակի քսանյակը բաղկացած է քաղաքական թիմի փորձառու եւ նոր անդամներից, նոր դեմքերից, բոլոր տարիքի ներկայացուցիչներից, տարբեր ոլորտներում աշխատող հաջողակ մարդկանցից,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն:

«Վրացական երազանքի» ընտրացուցակի առաջին քսանյակում ներկայացվել են.

1. Բիձինա Իվանիշվիլի - «Վրացական երա-

զանք» կուսակցության պատվավոր նախագահ

2. Իրակլի Կոբախիձե - Վրաստանի վարչապետ

3. Իրակլի Դարիբաշվիլի - «Վրացական երազանք» կուսակցության նախագահ, նախկին վարչապետ

4. Շավա Պապուաշվիլի - Վրաստանի խորհրդարանի նախագահ

5. Մամուկա Մոխարաձե - «Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար

6. Թեա Օուլուկիանի - Վրաստանի փոխվարչապետ, մշակույթի եւ սպորտի նախարար

7. Լաշա Տալախաձե - Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն, համաշխարհային ռեկորդակիր, ծանրամարտիկ

8. Վախթանգ Թուրնալա - գործարար

9. Մակա Բոժորիշվիլի - խորհրդարանի Եվրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԻՉԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԼԻՅՔ ՀԱՂՈՐԴԵՑ ՍԱՏՅԻՆԵ-ՉԱՎԱՍԵԹԻ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ»

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության թիմը շարունակում է նախընտրական քարոզարշավը:

Սեպտեմբերի 8-ին, տարածաշրջանային քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանք» Ախալցխեում հանդիպում ունեցավ տարածաշրջանի մունիցիպալիտետների Ախալցխեի, Ախալքալաքի, Նինոծմինդայի, Աղիգեմի, Բորժոմի եւ Ասպինդաջի բնակիչների հետ:

Հանրահավաքի մասնակիցների թվում էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Մամուկյանը, Սմբատ Կյուրեղյանը, Անտոն Օբոլաձեն, Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, ուրիշներ:

Հանրահավաքին ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, «Վրացա-



կան երազանքի» նախագահ Իրակլի Դարիբաշվիլին, Թբիլիսիի քաղաքապետ, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին, կուսակցության գործադիր քարտուղար Մամուկա Մոխարաձեն:

Ախալցխեում անցկացված «Վրացական երազանքի» նախընտրական հանրահավաքին

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՋԵՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԿԵՆ ՊԵՏԲՅՈՒՉԵԻՑ



Ինչպես նշեց վարչապետը, օրեր առաջ ավարտվեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքով նա-

Սեպտեմբերի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, հատուկ հրավիրած ասուլիսում, բարձրաձայնեց պետական բյուջեի ֆինանսավորմամբ ոչ կառավարական կազմակերպությունների համար դրամաշնորհային ծրագրի ստեղծման նախաձեռնությունը:

խառնված հանրային ռեսուրսներում հասարակական կազմակերպությունների հայտերի գրանցումը: Զուգահեռաբար, Վրաստանի կառավարությունն ընդունեց որոշում ստեղծել վրացական հասարակական (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԿՐՈՒՄ ԾԳՆԱԺԱՄ ՉԻ ԼԻՆԻ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԿՈՉՄԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԻՆ Է»

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, արձագանքելով բրիտանական Financial Times պարբերականում լույս տեսած «Արեւմուտքը պետք է պատրաստվի Վրաստանի ճգնաժամին» հոդվածին, հայտարարեց, որ երկրում ճգնաժամ չի լինի, պետությունը իր կոչման գազաթանակներին է:

Սեր երկրում ճգնաժամ չի լինելու: Տեսնում եք, որ պետությունը կանգնած է իր տեղում, հետևաբար, ոչ ոք չի կարող որեւէ

ճգնաժամ ստեղծել: Եթե ինչ-որ մեկն ուզում է Վրաստանում կրկնել այն սցենարը, որը մենք արդեն ապրել ենք 2020 թվականի

խորհրդարանական ընտրություններից հետո, ապա այս փորձը նույնպես բացարձակապես դատապարտված է ձախողման, չես կարող երկու անգամ նույն գետը մտնել: Ըստ այդմ, եթե որեւէ մեկը նման մտքեր ունի, ես բոլորին խորհուրդ եմ տալիս մի կողմ դնել նման մտքերը,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔ»-Ի ԲԱՐՈՋԱՐՇԱԿԸ

ԲԻԶՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔ» ԿՈՒՄԱԿՓՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԼԻՖ ԶԱՂՈՐԴԵՑ ՍԱՄՅԻՆԵ-ԶԱՎԱՆԵԹԻ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ելույթ ունեցավ նաև «Վրացական երազանքի» պատվավոր նախագահ Բիծինա Իվանիշվիլին:

Նա իր ելույթը սկսեց՝ ողջունելով Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի, բացառիկ պատմություն ունեցող այդ երկրամասի բոլոր բնակիչներին, վրացիներին, հայերին, մյուս ազգերի ներկայացուցիչներին, մարդկանց, ովքեր դարերի ընթացքում հիմնել են համդուրժողակամության, հայրենասիրության, փոխադարձ հարգանքի, փոխաջակցության, աշխատանքի եւ համագործակցության բացառիկ փաստեր:

- Այս երկրամասի նշանակության եւ գեղեցկության մասին շատ կարելի է խոսել, առավել եւս, որ ողջ աշխարհում դժվար է գտնել նման միջավայր, ինչպիսին այստեղ է, որտեղ զարմանալիորեն համակերպվել են բնությունն ու մարդը: Այս զարմանալի երկրամասի ամեն մի անկյունն աչքի է ընկնում իր յուրահատկությամբ, իսկ բոլորը միասին՝ մեր երկրի, մեր Վրաստանի հարստությունն են, բայց ամենից ու ամեն ինչից արժեքավորը հենց դուք եք, ովքեր այս քաղաքներն ու գյուղերը կյանքով եք լցնում,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

«Վրացական երազանքի» պատվավոր նախագահին իր ելույթում ընդգծեց, որ տեղի բնակչությունը սեփական երկրի առջև իր բարձր քաղաքական պատասխանատվությունը տարիների ընթացքում բազմիցս հաստատել է: Այդպես էր նաև 2012 թվականին, երբ, չնայած բացահայտ ճնշմանը, համարձակվեց ու «Վրացական երազանքի» հետ միասին հակադրվեց «Միասնական ազգային շարժման» ռեժիմին: Նա հավելեց նաև, որ «Վրացական երազանքը» երկրում ժողովրդավարության, օրենքի գերակայության եւ մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի հիմք դրեց: «Վրացական երազանքի» իշխանության գալուց հետո, Սամցխե-Ջավախեթին կենսական նոր լիցք ստացավ՝ կարգավորվեց ու զարգացավ ենթակառուցվածքը, զարգանում է գյուղատնտեսությունը, սահմանվել են բազում արտոնություններ եւ տարբեր ոլորտներին աջակցող պետական ծրագրեր:

- Ձեր գավառների կրթությունը դարձավ մատչելի, եւ այս բազմազգ երկրամասի յուրաքանչյուր բնակիչ, անկախ ազգային պատկանելությունից ու կրոնից, ազատ օգտվում է բոլոր այն արտոնություններից, որոնք տրված են Վրաստանի ցանկացած քաղաքացու: Ավելի կոնկրետ, նորացված տարածաշրջանների շրջանակներում, երկրամասի քաղաքների վերակառուցման համար ծախսվել է 130 միլիոն լարի, որի շնորհիվ վերափոխվեց ենթակառուցվածքը, կարգավորվեցին ու գեղեցկացան բոլոր քաղաքները: 2014 թվականից մինչ օրս տարածաշրջանում, որտեղ խմելու ջուրը լուրջ հիմնախնդիր էր, հարցի կարգավորման համար «Վրացական երազանքը» ծախսեց 350 միլիոն լարի: Իշխանությունը 11 500 բաժանորդի ապահովեց բնական գազով, իսկ, ընդհանուր առմամբ, տարածաշրջանի լրիվ գազիֆիկացումը կավարտվի 2025 թվականին: 2012-2024 թվականներին Սամցխե-Ջավա-

խեթի տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, կառուցվել է 5 հիդրոէլեկտրակայան ընդհանուր 99 մեգավատտ դրվածքային հզորությամբ: Բացի այդ, շինարարության կամ ուսումնասիրության փուլում է 18 հիդրոէլեկտրակայանի նախագիծ՝ ընդհանուր 112 մեգավատտ դրվածքային հզորությամբ: Եվ, ամենակարեւորը, բոլոր այս նախագծերն իրականացվել ու իրականացվում են առանց վնասելու երկրամասի բացառիկ էկոհամակարգը,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

Նրա խոսքով, իշխանությունը բացառիկ աջակցություն է ցուցաբերում տեղական փոքր եւ միջին գործարարությանը:

- Իշխանությունը տարածաշրջանում տարբեր պետական ծրագրերի տեսքով ծախսել է 300 միլիոն լարի, որի շնորհիվ լրացուցիչ ստեղծվել է 4 հազար աշխատատեղ, եւ այս գործընթացը շարունակվում է,- մեջք «Վրացական երազանքի» պատվավոր նախագահը:

Բիծինա Իվանիշվիլու համոզմամբ, «Համատեղ ջանքերով մենք կարող ենք կառուցել մեր երկիրը, որտեղ պաշտպանված կլինեն մարդու բոլոր իրավունքները, խոսքի եւ մտքի ազատությունը, կգործի իրական արդարացի դատարան, կլինեն ազատ լրատվամիջոցներ, կապահովվի գործարարության անձեռնմխելիությունը»:

- Բնական է, բոլոր այն բարիքներին, որոնց միասին հասանք 2012 թվականից հետո, ողջունելի է, սակայն կարելու էր այն է, որ այսօր մենք ապրում ենք Վրաստանում, որտեղ մեր երկրի նորագույն պատմության մեջ առաջին անգամ, 12 տարի ունեցանք անընդմեջ խաղաղություն, ինչը զարգացման կարելու համար նախադրյալն է: Իսկ դա տարիների ընթացքում ձեռ կողմից «Վրացական երազանքին» շնորհված վստահության արդյունքն է,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին՝ հավելելով, որ, ցավոք, այսօր Վրաստանում կան մարդիկ, քաղաքական ուժեր, ոչ կառավարական տարբեր կազմակերպություն-



Նախընտրական հանրահավաք Սիսիանում. Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ (ձախից)՝ Անտոն Օբոլաձե, Սմբատ Կյուրեղյան եւ Սամվել Մամուկյան

ներ, մի խոսքով՝ հավաքական ազգային շարժում, որը պատերազմը համարում է ոչ թե դժբախտություն, այլ հնարավորություն, որ օտարերկրյա գործընկերների օգնությամբ, թեկուզ պատերազմի կամ երկրի բնակչության արյան գնով վերադառնա իշխանության գլուխ:

- Խաղաղությանն այսօր առանձնահատուկ պաշտպանություն է պետք, այնպես, ինչպես անկախությանը, որպեսզի մի կողմից ոչ ոք չկարողանա բռնությամբ Վրաստանը ներգրավել պատերազմի մեջ, իսկ մյուս կողմից պահպանենք անկախությունը, եւ Վրաստանը կառավարի ժողովրդի կողմից ընտրված կառավարությունը, եւ ոչ թե՛ օտարերկրյա ուժերի կողմից վերահսկվող կոլեկտիվ «Ազգային շարժումը»,- ընդգծեց Բիծինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ այսօր, փաստորեն, ներգրավված ենք ոչ թե նախընտրական քարոզարշավում, այլ խաղաղության, երկրի ինքնիշխանության, ավանդույթների եւ արժեքների պաշտպանության պայքարում, եւ այդ պայքարի գլխավոր հարթակը հոկտեմբերի 26-ի խորհրդարանական ընտրություններն են:

- Ցավոք, հոկտեմբերի 26-ին Վրաստանի բնակչությանը վիճակված չէ կատարել ընտրություն լավի ու լավագույնի միջև: Անհայրենիք, ծայրահեղ ընդդիմության շնորհիվ, հոկտեմբերի 26-ին ընտրություն ենք կատարելու՝ պատերազմի եւ խաղաղության, կեղծ լիբերալ արժեքների եւ ազգային, ընտանիքի, հավատքի ու անկախության վրա հիմնված արժեքների միջև: Ընտրություն ենք կատարում մեր երկրի արժանապատիվ եվրոպական ապագայի եւ այն անընդունելի իրողության միջև, որը մեզ պարտադրում են ծայրահեղական ընդդիմությունը եւ օտարերկրյա ուժերը,- ընդգծեց Բիծինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ 2012 թվականի օրինակով՝ 2024 թվականի ընտրություններում «Վրացական երազանքի» հաղթանակը հիմնարար նշանակություն ունի:

«Վրացական երազանքի» պատվավոր նախագահի հավաստմամբ, առաջիկա ընտրությունների համոզիչ հաղթանակը թույլ կտա իրականացնել վճռորոշ քայլեր, մասնավորապես՝ պատասխանատվության ենթարկել «Միասնական ազգային շարժմանը», փոփոխություններ կատարել սահմանադրության մեջ, որտեղ կվավերացվի ընտանեկան արժեքների կարելուությունը, Ուղղափառ եկեղեցու դերն ու նշանակությունը:

- Թեև, ոչ ոք չպիտի մոռանա, որ դարեր շարունակ մենք ապրում ենք բազմազգ երկրում՝ Վրաստանում, որտեղ, վրացիների հետ միասին, հարյուրավոր տարիներ ապրում, պայքարում, աշխատում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, մարդիկ, ովքեր եղել են, կան ու ապագայում էլ կլինեն մեր երկրի գլխավոր հենարաններից մեկը: Ուստի, Վրաստանի սահմանադրությունում Ուղղափառ եկեղեցու դերի ընդգծմամբ, ոչ մի կրոնական ուղղության նշանակություն չի նվազի: Մեր երկիրը հենց նրանով է բացառիկ, որ տարբեր դավանանքի մարդիկ հարգանքով են վերաբերվում կրոնական բոլոր ուղղություններին եւ այդպես էլ կշարունակվի ապագայում կրոնական յուրաքանչյուր ուղղություն կրկին կլինի պաշտպանված, իսկ դրանց ազատության պաշտպանության գրավականը կրկին կլինի պետությունը, քանի որ մենք ապրում ենք մի երկրում, որտեղ պետությունը հավասարապես հոգ տանում յուրաքանչյուր քաղաքացու համար՝ անկախ նրա ազգային ու կրոնական պատկանելությունից,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

ՊԱՅՊԱՆՆԻՐ

ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՅԸ

135 ԼԱՐԻՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԻՐ

300 ԼԱՐԻ

ԹԵԺ ԳԻԾ:

0125

ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0125